

մէջ, բայց ծնված, մեծացած լինելով գիւղերում և ծանօթ բաժանման սկզբնապատճառներին, վստահանում եմ մի քանի նկատողութիւններ առնել «Մշակի» № 15 առաջնորդող յօդուածի առիթով:

Սո եղել եմ Երրակի բոլոր գիւղերում և ծանօթ եմ նրանց կեանքի հետ: Այն գիւղերը, որոնք ունեն բաւարար հող երկրագործութեան և անասնապահութեան համար, բաղկացած են այնպիսի նահապետական խոշոր ընտանիքներից, որոնց անդամները թիւը կատարեալ առատակեան կարելի է հաշուել: Երկրագործութիւնը մի այնպիսի արհեստ է, որ պահանջում է միութիւն, միացած աշխատանքի ձեռքեր թէ տղամարդու և թէ կանանց վերաբերեալ աշխատութիւնների մէջ և հենց այդ է պատճառը, որ միմիայն երկրագործութեամբ պարագայով ընտանիքները շատ դժուար են բաժանվում: Ընտանեկան բաժանման դէպքեր յաճախ պատահում են այն գիւղերում, որոնք հողի սատակը զրոյթեցնում պատճառով չեն կարողանում երկրագործութեամբ ձարել օրական ապրուստը: Ընտանիքները դիմում են կողմնակի աշխատանքի և ընտանիքի անդամներից ով որ ընդունակ է աշխատելու, բաժանվում է միւսներից, որպէս զի միմիայն փառաւոր ապրել «հիւրը չաշխատի, միւսներն ուտեն»: Իրական փաստ է, որ եթէ այդպիսի գիւղերը ապահովվին հողով և պարագէշին երկրագործութեամբ, այլ ևս չէին յաճախ կրկնվի ընտանեկան բաժանման դէպքերը:

Լինում են և այսպիսի դէպքեր ընտանեկան բաժանման. օրինակ 4—5 և աւելի տղամարդիկ, որոնք լինում են եղբայրներ, եղբոր որդիք և այլն՝ իրանց կանանց և երեխաների հետ ապրում են մի տան մէջ՝ ընտանեկան կեանքի այս ձևի կարգաւորումը յաճախ առաջ է բերում անբաւականութիւն, որ երեքին պատահաւ դառնում ընտանեկան բաժանման: Բայց լինում են շատ ընտանիքներ, որոնք այսպիսի դէպքերում չեն բաժանվում և քայքայում երկրագործութեան ոյժը, այլ համաձայնվում են միասին աշխատել, բայց ապրել առանձին իր գերդաստանի հետ մի և նոյն երկրագործութեան արդիւնքից: Այսպիսի դէպքերում ևս միացնում է երկրագործութիւնը և չէ թոյլ տալիս ընտանեկան բաժանում:

Գալով այն հարցին, թէ ընտանիքի բաժանման հարցը ընթերցել գործերի միջոցով թիւստութիւն մտադրել է ներմարկել գիւղական համայնական ժողովի իրաւասութեան և բաժանում թոյլ տալ համայնքի հաճութեամբ միայն՝ կարելի է ասել, որ համայնքի այդ արտօնութիւնը շատ դէպքերում կարող է սարսափել տուրքի և խաղաղական հետեւողների պատճառ դառնալ: Շատ անգամ պատահում են այնպիսի բաժանումներ գիւղերում, որոնց բազմապէս պէտք է վերջացնել, իսկ համայնքը, օգտվելով այդ արտօնութիւնից, կարող է թոյլ չը տալ յետաձգել կամ անտեղի կերպով հետաքրքրվել բաժանման սկզբնապատճառներով, որոնք խորին կապ են ունենում ընտանեկան ներքին կեանքի հետ: Գիւղական համայնքի պարտականութիւնը պէտք է լինի ընտանեկան բաժանումը կատարելու: Բայց քանի որ համայնքը, իսկ համայնքի բարեխիղճ գործունէութիւնը կախված է նրա կազմակերպչութիւնից և անդամների ընտրութիւնից:

Գիւղական համայնք կարելի է երկու կերպ կազմակերպել, այն է՝ կամ իւրաքանչիւր գիւղի համար իր գիւղացիներից, կամ թէ իւրաքանչիւր գիւղական հասարակութեան համար, որ բաղկացած է 6—7 գիւղից, կազմել մի գիւղական համայնք, հրաւիրելով համայնքի անդամ իւրաքանչիւր գիւղից իւրեւրի և բարեխիղճ մարդիկ, գիւղի ընտրութեամբ: Գիւղերում ընտանիքի բաժանումը գլխաւորապէս կատարվում է ուրիշներին միջամտութեամբ. բաժանվող ընտանիքը հրաւիրվում է 3 կամ չորս մարդիկ, որոնք թէև բաժանումը կատարում են առանց անբաւականութեան, բայց և այնպէս բաժանման մէջ միշտ լինում են անարդարութիւն և զրկանք, որովհետեւ բաժանող անձնատուրութիւնները, լինելով դրացի, ումանք բարեխիղճութիւն են ունենում բաժանվող ընտանիքի որ և է՝ անդամի հետ, ումանք էլ վրէժխնդրութիւն, որտեղից բնականաբար առաջ է դալիս պաշտպանութիւն մէկին և զրկանք միւսին: Նպատակայարար կը լինէր, որ իւրաքանչիւր գիւղական հասարակութեան համար կազմակերպվի մի գիւղական համայնք, որ անպատճառ բաղկացած լինի ամեն մի գիւղից ընտրած անդամներից, որ գիւղական ընտանիքի բաժանման հարցը վճռվէր համայնքով գիւղական դատարանում, ինչպէս և միւս գիւղական գործերը, և եթէ գիւղական համայնքը, իր արած անարարութեան և գեղձուկների համար ընտանիքի բաժանման մէջ՝ ներմարկվէր մի զգալի տուգանքի կամ պատժի, այն ժամանակ պէտք է

վստահ լինել, որ բաժանումը կը կատարէ համայնքը ամենայն ճշմարտութեամբ:

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Փետրվարի 15-ին

Խօսել մեր քաղաքի անչափաճառ աղջիկների ամուսնութեան հարցի մասին, նշանակում է հազար անգամ կրկնել այն, ինչ որ ամեն օր լինում է պարբերական մամուլի գաւառական թղթակցութիւնների մէջ: Սակայն մեր օրերը ներքին համար, բայց անչափաճառ ամուսնութիւնները ընտրութիւնների մէջ ազատութեան բացակայութիւնն է: Ո՛վ է հարցնում աղջկան, որ այս ու այն մարդու են տալիս: Կամ ինչ աղջկայ բան է իր համար ամուսին ընտրելը: Բաւական է, որ ծնողները հաւանք են մէկին. աղջիկն էլ պէտք է համաձայն լինի, թէկուզ շատ էլ նրա սրտով չը լինի փեսացուն: Այնպիսի աղջիկը, որը հակառակում է ծնողների կամքին, համարվում է խելագար և անասօթ, քանի որ ծնողների ընտրածը միշտ լաւ կը լինի, մանաւանդ որ այստեղ երիտասարդները սակաւթիւ են, պէտք է յարմար առիթը ձեռքից չը թողնել...

Բաղմաթիւ օրինակներից մենք այստեղ կը յիշենք միայն մէկը, թէ ինչ ստոր միջոցի են գլուխ մեր ծնողները, երբ որ աղջիկը սկսում է սատակ հակառակվել նրանց ընտրած փեսացուի դէմ: Մի քանի տարի առաջ մի հասակաւոր տղամարդ, անհամակերպ արտաքինով, բայց ունեւոր, մէկի ծնողներից խնդրում է նրանց դեղնիկ ու ծաղկափթիթ աղջկա ձեռքը: Մտորանքը ուրախակալով խնդրի աւետում են իրանց աղջկան. բայց աղջիկը մերժում է՝ ամեն կերպ աղերսելով ծնողներին, որ իրանից ձեռք վերցնեն: Սակայն անգուժ հայրը, տեսնելով, որ իր աղջիկը խօսքերով խելքի չէ դալիս, փակում է սենեակի դռները և սկսում է անխնայ կերպով հարուածել նրան մորակով: Գեղձ աղջիկը մտաւրակի հարստանքից յուսահատվում է և համաձայնութիւն տալիս. երկրորդ գիշերն իսկոյն ծննդաւ են բերում... Մեր խելքը ծնողները մինչև հիմա չը հասկացան, որ անցան այն, նրանք համար երանելի, հաճախակալութեան ժամանակները, երբ որ տղամարդից զուտամտներից և լեզուից զուտ աղջկան մոտ վառելիս նայում էին և այնպէս էին ընտրում իրանց համար հարմարացուցիչ... Պէտք է ուրախութեամբ յիշենք, որ կան այստեղ այնպիսի օրերոջներ, որոնք քիչ թէ շատ աղաւթութիւն են վայելում ամուսնական գործում:

Վախառութիւնը վաղուց այստեղ էլ է տարածված: Ամեն մի մարդ, որ ունի քիչ թէ շատ աւելորդ փող, սկսում է վախառութեամբ պարագայ: Բայց կան այստեղ այնպիսի հրէշաւոր վախառութիւններ, որոնք ընդ միշտ քայքայում են գիւղական օջախների նիւթական և բարոյական ոյժերը, թշուառացնում են գիւղական հասարակութեան ընտանիքներ և մի կտոր հացի կարօտ են դարձնում... Այդպիսի անգուժ վախառութիւնը համար տոկոսների մէջ ոչ չափ կայ, ոչ սահման: Տալիս են փող այնքան տոկոսներով, ինչքան իրանց խիղճն է է թելադրում: Իսկ նրանց խիղճը... Այստեղ սովորական բան է 10 րուրդուց ամսական 50—60 կոպ. վերցնել, այսինքն տարեկան 60—72%: Կան մի քանի և այնպիսի վախառութիւններ, որոնք 10 ր. տալիս են ամսական 80 կոպ.—1 րուրդի, այսինքն տարեկան 96—120%: Ո՛վ, Մի քանի «ծաղկալի վախառութիւն» %/օ չեն վերցնում, այլ ուղղակի գիւղացու հետ պայմանաւորվում են, որ գրաւմաղլիս և տոկոսի տեղ իր ժամանակին տան գինի, ցորեն, դարբի և այլն: Օրինակ, մեծ պատին, երբ հարկաւոր է վաղերի վրա խնամք տանել, տալիս են նրան ժողովարար 50 ր. և պայման են կապում, որ այնքան իրանց լաւ տեսակի գինուց 2 բեռ տոմարում Այս 50 ր. համար գրվում է մի մուրճակ 150 ր., այսինքն այն գումարը, որ ժողովարար 2 բեռ լաւ տեսակի գինու աւրոգութիւնն է: Անցնում է մինչև այնքան սկիւրը 6 ամիս և գիւղացին իր ստացած 50 ր. տեղ տալիս է վախառութիւն 150 ր.—գինիով, այսինքն 10 րուրդուն ամսական 3 ր. 36 կ., մի գումար, որ սարսափ կարող է աղբը մարդու վրա...

Մեծ մասամբ այնպէս է լինում, որ գիւղացին իր ժամանակին չէ կարողանում վճարել պարտածը: Եւ արտօնից տալ խիղճը: Տարիներ մեծ մասը բերքն անաղի է լինում: Հարկաւոր է վրաձարել պետական հարկեր, պահել տուն, ընտանիք և էլ ինչ կը մնայ գիւղացու ձեռքին, որ վախառութիւն բերանը ծածկի: Եւ ահա այդ ժա-

մանակն է, որ վախառութիւնը իր սատանայական ճանկերը խրում է գիւղացու կողմը: Փոխվում է հին մուրճակը և նրա տեղ գրվում է նորը, տուգանքի և տոկոսների տեղ՝ գումարը աւելացրած: Ահա մի օրինակ էլ վախառութեան ժաւառականութեան: Մի յայտնի վախառութիւնները հաւաքում է իր որդոց և ասում է հետեալ խօսքերը: «Սիրելի որդիք, ես մինչև իմ պէկով, իսկ դուք այսուհետեւ մի րուրդով տըւեցէք, որ զրանով ինձ ողորմութիւն ասեն: Եւ նրա որդիքը մինչև հիմա էլ սրբութեամբ կատարում են հօր կտակը:

Թէպէտ օրէնքը շատ խիստ է պատժում վախառութեամբ պարագայներին, բայց նրանք այնպիսի սատանայական ճանապարհներով են փող տալիս տոկոսով, որ չէ իմացվում: Վախառութիւն, վախառութիւն, որ իր պարտաւորանք վկաններով կապացուցանէ, թէ ինչքան %/ով է փող տուել նրան, նախօրոք վերցնում է իր պարտաւորանք մի տոկոսագրութիւն, թէ փող ստացել է կանոնաւոր %/ով:

Հարկաւոր է վախառութեան վրա ուշադրութիւն դարձնել:

Տեղացի

ՆԱՄԱԿ ԱՐԷՇԻ ԳԱՆԱՌԻՑ

Մեծ-Սեօգութիւն գիւղ, փետրվարի 5-ին

Անցեալ տարվայ սեպտեմբեր ամսի վերջում, երեկոյեան ժամը մօտ 7-ին, ես անցնում էի Մեծ-Սեօգութիւն գիւղի միջով, որ և ակնառու եղաւ հետեալ դաղանային բարբարոսութեանը: Այդ գիւղի տանուտէր Աւետիս Առաքելեան մէկ խեղճ գիւղացու՝ երկու հասոտ գորանների մէջ պառկեցրած, ոտներին և գլխին մէկ մարդ նստեցրած, որպէս զի խեղճը չը կարողանայ տեղից շարժվել, ինքը, դաղանաբար, հասոտ մտրակով ծծում էր նրան: Գիւղացու լացն ու պաղտանքը շատ հեռու էին տարածվում: Եթէ մարդ քար լինէր, այս դէպքում խեղճի լացն ու կոծը տեսնելով և լուրջ, ուշադրաց կը լինէր, մինչդեռ տանուտէրը դաղան էր դարձել և նրա քարացած սրտի վրա չաղդեցին այս բոլորը: Այդ նոյն իսկ րօպէտի մի ուրիշ գիւղացի ժողովարար կատարած տանուտէրին, յետ քաջաց նրան, դրպանել հանելով 5 րուրդ չարտեց դէպի նրան և աւելացրեց. «Ա՛հ, հինգը էլ ես քեզ տամ, աչքը կօխր նրա տուածի հետ (մատնացոյց է անում ծծովդին), միայն թէ աղատի այդ խեղճին անմահ անգործ մեռնելուց»:

Երբ խեղճ գիւղացուն բարձրացրին պառկեցրած տեղից, երկու րօպէտը յետոյ նորից ուշաթափվեց. ջուր անցնին նրա գլխին և մի կերպ ուշի բերին: Բայց, դժբաղդաբար, այս անգամ էլ խեղճի բերանից սատակ ոյժով արին էր հոսում: Նրան մի կերպ քարշ տալով տուն են հանցնում: Եւ բոլորովին ցածրաբեղ էի, տեսնելով այս բոլորը, և չը գիտէի ինչ անել: Նոյն գիշերը ես անցկացրի Մեծ-Սեօգութիւն գիւղում: Գիշերը վրա հասնելուն պէս տանտիրոջն ուղեկցութեամբ գնացին ծծված գիւղացու տունը. խեղճն արգէն ժամվան հաշիւնով վերջին րօպէտին էր գտնվում: Մայրը և կինը լաց էին լինում: Մի կերպ նրանց հանգստացնելուց յետոյ, մօրը խեղդեցի պատմել ծծովդու պատճառը: Մայրը հետեալը պատմեց ինձ, թէ անցեալ տարի մի գիւղացի գալիս է նրա որդուց երկու թղարք (40 պուլ) դարբի է պարտք վերցնում, մի տարի ժամանակով. այս տարի այդ ժամանակամիջոցը լրացել է: Որդին գնացել պահանջել էր իր դարբին, իսկ գիւղացին չէր ցանկացել տալ: Որդին այդ մասին գնում գանդատվում է տանուտէրին. տանուտէրն առնում և տալիս է. իսկ յետոյ կանչում է և իր կրած նեղութեան համար պահանջում է 10 րուրդ: Նա պատասխանում է, որ եթէ երկու թղարք գալիս ծախելու լինի, ընդամենը կը դոյնայ 16 րուրդ. 16-ից եթէ 10-ը տալ տանուտէրին, ինչ կը մնայ իրան, և յետոյ խնդրում է, որ 5 րուրդ լիով բաւականանայ: Իսկ տանուտէրը տանում է 5 րուրդն ու խեղճ գիւղացուն էլ այս օրին է հասցնում:

Քիչ ժամանակից յետոյ խեղճը մեծ չարաբանքներով վախճանվում է երեք մանկահասակ երեք. Աստուծոյ խնամքին թողնելով, որոնք այժմ անտանելի կացութեան մէջ են: Սպանվածի մայրն անձամբ գնացել է պահահազապի մօտ և ամբողջ եղբորթիւնը պատմել է, իսկ պրօկուրօրին խնդրել է առած, բայց մինչև այժմ ոչ մի կարգադրութիւն չը կայ այդ մասին:

Մի ուրիշ անգամ, էլի այդ գիւղի միջով անցնելիս, ղեկոնքների սկզբին, հետեալ բարբարոսութեանը ակնատես եղաւ: 14—15 տարեկան

մի պատանու ձեռքերը մի ծառից կապտած, ոտները բոբիկ, ոտների տակը մօտ կէս արշին խորութեամբ փոս փորած, մէջը ջրով լի խեղճ պատանին ոտի մէկը բարձրացնում, միւսը ջրի մէջն էր դնում, իսկ խեղճ ամբողջ մարմնով դուռն էր ցրտի սաստկութիւնից: Այդ իսկ րօպէտն տեսաւ, որ գալիս էին տանուտէրը և նոյն գիւղի ծխատէր Ներսէս քահանայ Տէր-Ներսէսեան: Տանուտէրը մատնացոյց է անում պատանու վրա և մի դաղանային հայեացք դնելով խեղճի վրա, թողնում է պատանուն նոյն անտանելի տանջանքին ենթակա: Պատանու լացն ու կոծը, իր մօր դառն աղիողորմ արտասուքի հետ՝ չաղդեցին ոչ քահանայի և ոչ դաղան դարձած տանուտէրի քարացած սրտի վրա:

Ահա ինչ բարբարոսութիւններ են կատարվում մեր գիւղերում:

Ակնատես

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ խնդրում են յայտնել, որ Քիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան օգոստի տրված երեկոյթից, որ տեղի ունեցաւ յունվարի 31-ին, Քիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում, մնացել է արգիւնը 700 րուրդի 25 կօպէկ: Այդ գումարը գոյացել է հետեալ կերպով. մուրը եղել է տոմարների վաճառումից 884 րուրդի, պրեմիաներից 102 ր. 90 կօպէկ, ընդամենը 936 րուրդի 90 կօպէկ: Ծախք եղել է, թատրոնի, երաժշտութեան և ծառաների վրա 106 ր. 25 կօպէկ, դրոշմանիւնների վրա 45 ր., յուշարար 10 ր., ֆիլիսերի, դաշնամուրների տեղափոխութեան, փողերի և ուրիշ ծախքերի վրա 75 ր. 40 կ., ընդամենը 236 ր. 65 կօպէկ: Ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը սիրողների խմբին, որ կազմակերպեց երեկոյթը և այն անձանց, որոնք տոմարներից դուրս՝ տուին պրեմիաներ:

«Արեւելք» մէջ կարդում ենք. «Նուպար փաշայի կտակի մասին,—որ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է ազգին մէջ՝ մեծանուն գիւղահեղին մասնի Վեր,—հետեալ տեղեկութիւնները ստացանք Աղբստանից: Մեր թղթակցին, Հակոբակ մինչև հիմա տարածված գրոցներուն, կտակին պարունակութեանը վրայով որ և է ճշգրիտ տեղեկութիւն ունեցող չը կայ, նոյն իսկ Նուպարեան ընտանիքին առանձնաբերական բարեկամներու շրջանակին մէջ: Առ այժմ գիտցուածը սա է թէ անոնք որ հանդուգեալ փաշայի ծառայութեանը մէջ գտնուած են, մինչև իրենց մահը պիտի վայելեն անոր առատածնութեան արդիւնքը, ինչպէս անցելուն մէջ: Նուպար փաշայի կտակը, որ Գահիրէի գերմանական հիւպատոսարանը կը գտնուի, հաւանորէն չաթմուս մէջ պիտի բացուի: Պարունակութիւնը ծանուցուելուն պէս՝ պիտի հաղորդեն Արեւելքին»:

Հանդուգեալ Յ. Խուրազեանի թողած ժաւառութիւնը, որի գործադրութիւնը նա կատարելով յանձնել է Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան, բոլոր հաշիւներն աւարտելուց յետոյ, հասաւ առ 1 յունվարի 1899 թիւ 111,982 րուրդի 91 կօպէկի արժողութեան: Այդ ժաւառութիւնը բաղկացած է անշարժ գույքից, արժեթղթերից, Քիֆլիսի Աւետարական բանկի ակցիաներից, մուրհակներից և առանձին դրամից: Արժողութեան գումարը որոշված է գզոյ կերպով: Անշարժ գույքը կազմում են՝ մի տուն, մի քարվանդաբայ և մի խանութ, որոնց արժողութիւնը աւելի բարձր է, քան նշանակված է: Նոյնպէս Քիֆլիսի Աւետարական բանկի ակցիաները, որ գնահատված են 24,000 րուրդի, արժեն ընթացիկ գներով մօտ 40,000 րուրդի: Ընկերութեան խորհուրդը վերջացրել է դատաստանական և ուրիշ հիմնարկութիւնների հետ անհրաժեշտ ձևականութիւնների կատարումը և այժմ վերջնականապէս սեփականատէր է դարձել այդ խոշոր ժաւառութեան:

Մեր քաղաքներում գոյութիւն ունեցող քաղաքային դպրոցների ուսուցիչները մինչև այժմ նշանակվում և արձակվում էին քաղաքային ինքնավարութեան կողմից: Ուսումնարանական վարչութիւնը ուսուցիչների այդպիսի դրութիւնը համարում էր անկանոն, որովհետեւ նրանց կրթական գործունէութեան գնահատութիւնը կախված է երկու տարբեր հիմնարկութիւններից: Այդ հանգամանքը աչքի աւել ունենալով, կառավարիչ սենատը մի մասնաւոր դէպքի առիթով՝ հրատարակեց յրջաբերական, որով յայտնում է թէ ուսուցիչները քաղաքային կախված պէտք է լինեն ուսումնարանական վարչութիւնից և ոչ միայն ուսուցիչների

հրաւիրել և հետաքննել, այլ նոյն իսկ հասարակ
արձակուրդներ տալը պէտք է վերադառնալով լինի
ուսումնական վարչութիւնը: Ինչ վերաբերում է
բաղադրյալին ինքնավարութիւններին, նրանք միայն
են անտեսական մասն վրա, ապահո-
վելով նրանց նիւթական կողմից: Անկասկած,
սենատի այս բաղադրութիւնը, որ հրատարակ-
ված է ընդհանուր գիտութեան համար, մեծ փո-
փոխութիւններ կառավարողի թաղաքային ղեկ-
ւորներին մանկավարժական և վարչական կազ-
մակերպութեան մէջ:

Վերջին ձեռնարկը և մերկաներից Անդրկովկասի
շատ տեղերում կորուցելու հաղորդակցութեան ծա-
նապարհները: Այս վեցերորդ օրն է, որ Անդրկով-
կասը կորցնում է հիւսիսից կովկասեան լեռնաշղթ-
այի վրա եկած առատ ձիւնից: Այսօր ողաւթում
է առաջին պատու: Զիններից լանդարմային Ալեք-
սանդրովի և Աղբալովի, Կարսի և Ալեքսանդր-
բաղդի, Կարսի և Կաղզուանի ճանապարհները:
Ալեքսանդրովի և Աղբալովի մէջ հաղորդակ-
ցութիւնը վերականգնված է: Զինների պատճա-
ռով լանդարմային և երկաթուղու գիծը, որ սա-
կայն ներկայումս կարգի է բերված և երթևեկ-
կութիւնը բոլորովին կանոնաւորված է: Տեղի
են ունենել և դժբաղդ դէպքեր, որոնց թիւը
դեռ որոշված չէ:

Ամերիկական ցորենը, որ այնպէս աղով կեր-
պով մրցում է Ռուսաստանի ցորենի հետ ան-
գլիական, ֆրանսիական և գերմանական վա-
ճառանոցներում, սկսեց վերջին շաբաթների
ընթացքում երեւել և մի նոր վաճառանոցում,
այն է Կ. Պօլսում, որ սկստակէ իր ցորենը
և ալիւրը, բացի իր պետութեան մասերից, ստա-
նում էր Ռուսաստանից: Օղեսայի վաճառական-
ների վրա այդ հանգամանքը շատ ծանր տպա-
ւորութիւն գործեց, որովհետև Ամերիկայի հետ
մրցումը դարձել է շատ դժուար հեռուոր վա-
ճառանոցներում:

Ռուսաց պետական արժեթղթերին աւելանում
է մի նոր շարք, տասն միլիոն ռուբլի արժողու-
թեան: Այդ արժեթղթերը պէտք է բերեն չորս
տոկոս: Պետական այդ նոր բնույթը նպատակ
ունի ծածկել պետական զանաւարանի այն պա-
կաւորը որ գոյացել է երկաթուղական ընկերու-
թիւններին փոխարինարար պարտք տուած գու-
մարների պատճառով:

Պաշտօնական հաղորդագրութիւններից երե-
ւում է, որ առաջիկայ դարձան մեր երկրագործ-
ները պէտք է կուլ մղեն մորենի դէմ: Սո-
նելի ձուերն մեծ քանակութեան նկատմամբ է
Գանձակի նահանգում, մասամբ Բաղուի և Թիֆ-
լիսի նահանգներում: Անցեալ տարի մորենը
թէ կոյտվիւն ունէր, բայց բազմաթիւ չէր,
ուստի նրա պատճառած վնասը շատ մասնա-
ւոր էր: Այս տարի ըստ երևոյթին նա պէտք է
հանդէս գայ աւելի մեծ ոյժով:

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր շաբաթի,
փետրվարի 20-ին, այդպիսովական ընկերու-
թեան գրասենական, որ գետնովմ է Գօլ-
վիսկի պրոսպեկտի վրա № 45, տեղի կունենայ
դրոյց շինէտա կողմէ խնդրների մի տեսակի
և ծառերի խնամելու մասին: Այդպէս է երե-
կոյեան 71/2 ժամին: Կարող են զրոյցին ներկայ
լինել բոլոր ցանկացողները:

Անցեալ տարի, մարտի 28-ին, արհեստաւորնե-
րի ժողովը որոշել էր առանձին հարկի ենթա-
կել արհեստաւորներին և նրանց օգնականներին
տրվող վկայագրները և նշանակել ուրիշ տու-
բեր: Նահանգական ատենը, ընկելով ժողովի
այդ որոշումը, չէ հաստատեց: Արհեստաւորների
զիւնաւոր Սերգեանց, տեղեկացնելով մեզ այդ
կարգադրութեան մասին, խնդրում է յայտնել, որ
մայիսի ժողովի որոշումները պէտք է ձայնալին
անվաւեր:

Մեր խնդրութեան մէջ ստացվելին հետե-
ւեալ նոր հրատարակութիւնները: 1) Ատրպե-
տի Բերաւ Առաքելը, վէպ թիւրքաշայերի
կեանքից, տպված Նոր-Նախիջևանում, փոքրա-
կիւր 71 էրես, գինը 25 կօպէկ: 2) Ներսիսեան
հայոց հոգեւոր դպրոցի տեղեկագիրը 1897/8
ուսումնական տարվայ գործունէութեան մասին,
մեծադիր 23 էրես, Թիֆլիս, 1899: 3) Պերճ
Պօռնեանցի՝ Նաղիկ Մկրտչեան տունը, պատ-
կեր, փոքրագիր 32 էրես, գեղեցիկ կաղնեանով,
հրատարակութիւն «Աղբալ-Տարալ», Թիֆլիս,
1899, 4) Ա. Քոլովա. Разведение Масляны, հրա-
տարակութիւն կերպագործութեան միջոցաւ:

Վովկասեան լիւարդի, մեծադիր 64 էրես, գոյ-
նաւոր նկարներն մի տախտակով, Թիֆլիս 1899:

«Русскія Вѣдомости» լրագրի № 34 համարում
տպված է «Братская помощь» յայտնի ժողովա-
ծու խմբագրութեան հաշիւը անցեալ յունվար
ամսում եղած նուէրների մասին: Դրանից երե-
ւում է, որ բացի Արիստակէս եպիսկոպոսի ու-
ղարկած 1,522 ռուբլուց և մի քանի հարուստ
հայերից ստացած գումարներից, եղել են նուէր-
ներ նաև մի շարք Մոսկովայի հարուստ և գոր-
ծարանատէր ուսանների կողմից, մասաւորապէս
3000 ռուբլի: Այս երևոյթը շատ միմիջարկան
է, ոչ այնքան նուէրների քանակութեան նիւ-
թական կողմից, որքան ի նկատի առնելով այն
տրամադրութիւնը, որ այժմ տիրում է ուս-
լրջամիտ մասն մէջ դէպի միւս ազգութիւնները,
և մասնաւորապէս դէպի հայերը: Մինչև այժմ
ուսու կեղծ ազգասէրները մի քանի պահպան-
դական թերթերի միջոցով չեն քաջվում տեղի
անտեղի յարձակվել մեզ, հայերի, վրա և բար-
դել այնպիսի մնացորդներ, որոնք կարող են
միայն հիւանդ երակալութիւնների մէջ ծնունդ
առնել, և ահա այսպիսի սևահոգիների կողմից
երբ դուրս են գալիս աշխիւ և բարեխիղճ մար-
դիկ, որոնք այդ կեղծերը մաքրում են, մի կող-
մից մասնակի մէջ պաշտպանելով անտեղի մեղա-
դրվողին և նիւթական օգնութեան գայով այդ
անտեղի դատաւարութեան, ժողովրդի հալածանքի
ենթակցված որբերին, մարդ մի կերպ ներդա-
մատութեամբ է վերաբերվում դէպի չարախօս
պարտախնդրներ, որոնք աւետարանի խօսքով «Զ
գիտեն ինչ են գործում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆԻ ԿՐՈՆԱՓՈԹԻՒՆՆԵՐԸ

Կ. Պօլսի Արեւելք լրագիրը Վանի կրօնա-
փոխութեան հարցին մի առաջնորդող յօդուած
նուիրելով, ի միջի այլոց, ասում է հետեւեալը:

«Ներքայտ Վանայ պէս կարեւոր գաւառէ մը
չքաւորութեան և կրօնափոխութեան գոյծեր կը
հասնին, զարմանալի, միանգամայն ցաւալի չէ
որ շէնք շտորճ նովիւ մը չի կայ հին որ տեղե-
կագրէ պատրիարքարանի իրաց բուն կացու-
թիւնը, նոյն իսկ այս ժամուս որ չարթը ար-
դէն պատահած է: Այդպիսի հայաշատ վիճակ
մը ուր ոչ թէ աղէտ մը հասնելէ վերջը տեղե-
կագրելու, այլ նաև չը հասած, իբր պաշտօնա-
կան պատասխանատու հովիւ, կանխազուշակե-
լով պատրիարքարանի ղեկուգնելու վարչական
հարկ կայ ու կը մնայ, կայ ու կը կենայ կրօ-
նական մը որ արժանեօք ներկայացնէ Կ. Պօլսոյ
պատրիարքութիւնը:

«Մենք սովոր ենք ամեն բան ուրիշ վրա
բեռնել և եթէ ոչ որ գտնենք իբր պատասխա-
նատու, Աստուծոյ վերադրել մեզի պատահած
ամեն աղէտի սկզբնապատճառը, առանց մտա-
ծելու որ Աստուած աղէտը ստեղծած է մարդե-
րը աշխուրջ և չըբնայեաց ընելու համար: Լիւծ,
Կոտայ և Աղթամար, Վանայ այս երեք փառա-
ւոր թեմերը, ապիկար կրօնաւորներու ձեռքը
խաղալիք դարձած են և կրօնափոխական ահաբ-
կու հոսանքին առջև Վանայ լիճին հոսանքները
իրենց կարգին տալական խաղալիքներու կար-
գը անցած են այլ եւ: Բայց որով է յանցանքը,
ցործին որ այս տարի նուազ, գալ տարի կըր-
նայ առատ հունձը պարգեւի, թէ մերթիւր որ
չենք փութացած ժամանակին իրենց պաշտօնին
բարձրութեան արժանի եկեղեցականներ զրկել
այդ առիթամբ անհովիւ վիճակին մէջ:

«Ըստ արդարութեան պարտք մըն է ըսել սակայն
թէ կայսերական կառավարութեան փափաքին
համաձայն թէ կատրիարքարանը ջանաց բա-
նիւրուն առաջնորդ մը զրկել Վան, բայց մեր
անձնամուլ եկեղեցականներն շատ մը չի ներ-
կայացած որ համի ստանձնել այդ պաշտօնը:
«Բայց եղածը եղած է և անօրում է վայնա-
սուններ բարձրացնել՝ յետադարձ ակնարկներ
նետելով անցեալ տեսարաններու վրա, քանի որ
ներկայ պատկերը որ այնքան տխուր գոյններով
նկարագրուած է պատրիարքական չըբարեբա-
կանին մէջ, արդէն բաւական ծանրակշիւ է
բոլոր մեր ուշը իր վրա հրաւիրելու համար:

«Ինչ ըրինք, սակայն, այն մէկ երկու ամիսնե-
րէն ի վեր որ Վանայ կրօնափոխութեանց գա-
լակութիւնը ահուկի համեմատութիւնները ստա-
ցաւ: Բեր տարիք անցուցած տեղեկ աղջիկ մը,
որ գոնէ կարելի դրամծիւր մը ունենալու առա-
ւելութիւնն ալ չընձայեք, Վանայ վիճակը վի-
ճակի զրկել մեր Պօլսեանակ եկեղեցականներուն
մէջ, որոնք ամենքն ալ սովոր են Վոսիսի ա-
փոնքէն կրօնային պատգամներ որոտալու և ո-
րոնց ոչ մէկը, փոխանակ ինքնայօժար դիմումով

մը՝ վտանգուած հօտին փրկութեան փութալու,
հապար թախանձանքով առաջարկուած պաշտօն
անգամ ընդունելու յօժարութիւնը ցոյց չը տուաւ:
«Իրայ այս վիճակին մէջ, քննադէս չը խոստո-
վանիլ որ մեր կղերը ոչ միայն մեր օրհնեալ հին
եկեղեցականներուն արժանի յաջորդները չէ,
այլ նաև հայ աշխարհականներուն եկեղեցասիր-
բութեան և ոգործածութեան չափ ալ չի սիրեր
իր ծառայած եկեղեցին ու ժողովուրդը:

«Ս. Պատրիարք Հօր հոգեւունց չըբարեբալանը
արդէն զվառատ արձագանդ մը գտած է ամեն
հայու սրտին խորը: Սկզբնական հանգանակու-
թիւն մը, քանի մը հարուստ ազգայնոց զթափ-
րական և եկեղեցասիրական անսպաս գզաց-
մանց մէկ նորոգ ապացոյցը տուած է արդէն:
Թողունք հաւաքուելիքը, ցարդ հաւաքուած հա-
մեստ գումարն ալ իր բարեբար ազդեցութիւնը
պիտի ունենայ, բայց դարձը կայ և մարդն է
որ կը պակսի և մէն մի ժամ որ կը սահի, տա-
րուան մը աւերը կը գործէ քայլակցեալ և չըա-
ւոր վանեցնիներուն մէջ:

«Արդէն կայսերական կառավարութիւնը խոս-
տացած է տեղական ինչ-ինչ դիւրութիւններ
ընծայել կրօնափոխական ազգաւոր հոսանքը
կասեցնելու համար: Առայժմ, նուիրատու հայե-
րուն դրամական պարգևները՝ գործնական օգ-
տակարութեան գործի կը մնան և ժողովուրդը
ամսական 6 դրուշի համար կը շարունակէ կրօ-
նափոխ ըլլալ: Հայ եկեղեցականները գոցցես
կուրացած և անտեղեակ Լուսաւորչի փաբախին
անցուցած ճգնաժամին, փոխանակ Ս. Պատ-
րիարք Հօր հրաւերին անսպաս, շուրջը բոլորե-
լու և խմբովին փութալու վտանգուած հօտին
փրկութեան, իրենց դարաւոր վերաբերվին լայն
ծաղքերուն մէջ կը ծալին իրենց անձնամուլ հո-
ւուի անփայթ թեմերը:

«Եւ կը զարմանանք տակաւին թէ հայերը
կրօնափոխ կըլլան... Ամեն բան, նոյն իսկ կը-
րօնքը, մրցման անողոր օրէնքին հպատակ է
այսօր և ինչպէս կուզենք որ գաւառացի հայուն
կրօնական իտէալը չը խախտի և միմիջարկանե-
րու և բաթերաներու գիրքը չը նետուի այն երբ
վերջապէս գիրք մը կը գտնէ հին նետուելու
համար, մինչդեռ մերթիւնքը՝ իրենց գիրք ու
պարարտ մարմինները հեռու, վտանգուած հօ-
տէն կարելի եղածին չափ հեռուն, գեղազուարճ
դաշտերու մէջ կը պտտցնեն հին որոնելով ի-
րենց մարմնապաշտ հոգեւորականի հնչող գործու-
նէութիւնը»:

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ

«Գոնութեամբ կիմանանք թէ այն տեսակցու-
թեան միջոցին, զոր ս. պատրիարքը ունեցաւ
նախնիթաց օր, կայս. պալատին մէջ, Ա. քաւ-
տուղար Թահմինի այլի հետ, ն. վսեմութիւնը
յայտնեք է ս. պատրիարք հօր թէ վն. սուլթա-
նը բարեհաճած է հրամայել, որ Վանայ կարօ-
տեաններուն հարկ եղած օգնութիւնները շնոր-
հուն կայս. կառավարութեան կողմէ: Մի և նոյն
ատեն, հարկ եղած հրամանները պիտի տրուին
պատկանեալ իշխանութեան՝ որպէս զի Վանայ
կրօնափոխական դէպքին նման հանգամանքնե-
րու առաջն առնուի և տեղային դիւրութիւն-
ներ ընդայայտու:

«Փարսեական դեսպան պ. Գոնութեան ընկե-
րակցութեամբ Ա. թարգման պ. Ռուէլի՝ նախն-
իթաց օր աղբ. պատրիարքարան եկաւ փոխա-
դարձ այցելութիւն տալու ս. պատրիարք հօր,
որ անցեալ ուրբաթ շնորհաւորական այցելու-
թեան գացած էր պ. Գոնութեան: Ս. պատրիարք
բացակայ ըլլալով, դեսպանը իր այցեւորման
թիւղոցը:

«Վանայ միմիջար տօքտ. Ռէյնրուտի կողմէ
Պայպը Հատուկ ուղղուած նամակ մը տխուր
գոյնեցով կը նկարագրէ՝ լատին կղերին կողմէ
ձեռք առնուած միջոցներուն վրայ հայ գիւղա-
ցիներուն կաթօրկութեան դիմելուն պարագա-
ները: Կր լսենք թէ Արշակ էֆ. Շամսեան,
գործակատար Պայպը Հատուկ, երեկ պատրիար-
քարան գալով այս տեղեկութիւնները հաղորդած
է ս. պատրիարք հօր:

«Տ. Ներսէս եպիսկոպոս Ասլանեան Խառն
Ժողովի այսօրուան նիստին կը ներկայանայ,
ուր խորհրդակցութիւն մը պիտի կատարուի
Վանայ առաջնորդական նորնոր տեղապահին
պաշտօնին վերաբերմամբ: Տ. Ներսէս եպիսկո-
պոս պիտի ներկայէ՝ իր առաջարկութիւնները,
զորս յայտնած էր Քաղաքական Ժողովի անցեալ
ուրբաթ օրուան նիստին: (Արեւելք)»

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերս ֆրանսիական Լիլ քաղաքում մի
սարսափելի սպանութիւն կատարվեց: Ֆրանսիա-

կան լրագիրները հաղորդում են, որ Մօննէ փո-
ղոցի վրա գտնվող վարձարանից, որը կաթօրկ
վարդապետներն են ղեկավարում, անհետացաւ
մի պատանի, Ժափօ անունով, և կատարված
խուզարկութիւնները անպտուղ մնացին: Մի ա-
ռաւօտ նոյն վարձարանի մէջ գտնվեց պատա-
նին խեղդված և բռնաբարված: Առաւօտը, երբ
դռնապանը աւելում էր խօսարանը, մէկ պարկ
գտնելով բացեց, և Ժափօ դիակը գտաւ պարկի
մէջ: Պարկի մօտ դրված էր մի դատարկ սըն-
դուկ, երևի դիակը մէջը դնելու համար, մի քիչ
հեռու մէկ նամակ էր գցված, որի մէջ ասված
էր թէ սպանութիւնը կատարել է մէկ հոգի:
Անմիջապէս իմաց տրվեց ոստիկանութեան, որն
իսկոյն դատաւարական պաշտօնեաների հետ
ուսումնարան եկաւ և սկսեց քննութիւն կատա-
րել: Պրօկուրօրը հրաւիրեց դպրոցի մէջ գտն-
վողներին մի քանի տղա գրել թղթի վրա, որ-
պէս զի համեմատեց գտնված նամակի գրի հետ:
Վարդապետներից մէկը չուզեց գրել: Երկրորդ
փորձը ևս կատարվեց, կղերականները հրաւիր-
վեցին դիակի առջևից անցնել: Հ. Ֆրանկիէ,
որ չուզեց բան գրել թղթի վրա, անցնելու մի-
ջոցին յուզվեց և յայտարարեց թէ սպանութիւնը
ինքն չէ գործել: Ոստիկանութիւնը անմիջապէս
ձերբակալեց նրան: Ժափօ 11½ տարեկան էր:

Սերմոյլ գիւղերը թշնամական ցուցքը եղան
այդ դպրոցը վարող հոգեւորականների դէմ: Ե-
րբեք հապար հոգուց բաղկացած մի խումբ ամեն
դասակարգերից, փողոցները պտտելով, աղաղա-
կում էր. «Սատկեն կղերականները, կախաղան
հանվեն նրանք»: Այդ խումբը կղերական ուրիշ
դպրոցների և կաթօրկ լրագիրների խմբագրու-
թիւնների առաջ ցուցքը արեց:

ՄՇԱԿԻ ՀՈՒԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 փետրվարի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Այսօր Պետրօպօլսկի տա-
ճարում հոգեհանգստեան պատարագ մատուց-
վեց Կայսր Նիկոլայ Պաւլովի համար: Հո-
գեհանգիտող կատարում էին Պետրբորգի,
Կիեւի և Մոսկովայի միտրօպօլիտները ս. Սի-
նօդի անդամներ և այլ հոգեւորականու-
թեան հետ: Հոգեհանգստին ներկայ էին Թագա-
ւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդ-
ովնա, Մեծ Իշխանները և Իշխանուհիները:

Այսօր տեղի ունեցաւ 1900 թւին Պարիզի
համաշխարհային ցուցահանդէս գնալու համար
էժանացրած դիւանքների ընկերակցութեան գը-
լաւոր գրասենականի բացումը: Օժմանը ներկայ
էին՝ առևտրի և մանուֆակտուրայի դեսպարտա-
մետի գլխավոր Կովալէվսկի, փոխ-գլխավոր
Միխէլիչ, Պարիզի ցուցահանդէսի ուսուց
բաժնի ընդհանուր կոմիտար իշխան Տէյնիշվի:
Ընկերակցութեան հիմնադիրն է Նեխաշև: Ըն-
կերակցութեան նպատակն է՝ նպաստել ուսունե-
րին էժան կերպով մնալ ցուցահանդէսում: Որոշ-
ված է 300 ռուբլով ցանկացողներին Վարչավա-
յից, Վերթօթօթից կամ Ալեքսանդրովից տանել
Պարիզ և յետ բերել երկրորդ կլասով: Լիակա-
տար ապրուստ առաջնակարգ հիւրանոցում, տա-
րով ամեն մէկ անձին առանձին սենեակ երկու
շաբաթվայ ընթացքում: ձրի այցելութիւններ
ցուցահանդէսին յատուկ ղեկավարներով:

ԼՕՆԻՕՆ: «Times» լրագրին Պէկինից հեռագ-
րում են, որ Նան-Նին-Պու նոր դաշնադրային նա-
ւանանգստի բացման օրը դեռ չէ նշանակված:
Զինատանը վերապահում է իրան կօմտօր նա-
ւանանգստի վրա:

ՊԱՐԻԶ: Վճռաբեկ դատարանի քրէական ա-
տենանը, Լէվիի նախադատութեամբ, ընտում է
այսօր Պրկարի ինդիքը դատարանի անհղինա-
կութեան մասին: Իր դէմ Հասարակութիւնը
քիչ է: Պրօկուրօրի տեղը նստել է ընդհանուր
պրօկուրօր Մանօ: Ատալէն կարգում է ղեկու-
ցումը:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների ժողով: Կիւնէօ
կամենում է հարցապնդում անել նորերս տեղի
ունեցած խուզարկութիւնների ապօրինութեան
մասին: Դիւպլին պահանջում է, որ հարցապնդ-
ուումը յետաձգվի մէկ ամսով: Պատգամաւորնե-
րի ժողովը համաձայնվում է և ապա սկսում է
քննել թիւդէտը:

ՄԱԳԻԻԻ: Թագուհի-իննամակաւորէին շարու-
նակում է խորհրդակցել քաղաքական գործիչնե-
րի հետ: Հօգնածամի ելքը անհար է գուշակել:
ԲՐԻՏԱՆԻ: Բնկերական թագուհին ծանր կեր-
պով հիւանդացաւ քթոնիտով:

ՀՈՒՄ: Պապի առողջական դրութիւնը այն-
քան լաւ է, որ վերքը երկրորդ անգամ կապ-
ցին, վաղվայ փոխանակ, այսօր:

ՀՈՒՄ: Պապի հիւանդութիւնը թէպէտ առ-
այժմ այնքան երկուդալի չէ, բայց կարդինալ
Լէդօլովսկի, որպէս կարդինալներից աւա-
գագրեմը, այցելեց Օրլէյա դէկանին և աւա-
գագրեց սարկաւազ Մէրտալին, որոնց հետ նա,
առաքելական որոշումներ համաձայն, պապի

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.